

ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂՄՈՒԹՅԱՆ ԼԵԶՎԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՅՑ.
ՊԵՏՐՈՍ ԳՈՒՐՅԱՆ

ՅՈՒ. Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Պ. Գուրյանի շափածոյի լեզվաոճական համակարգի վերլուծութիւնը չի ճանաչում իբրև բացարձակ պայման այդ շափածոյի ժամանակային (մինչև 1871 թ. և 1871 թ.) թեմատիկ-գաղափարական («քաղաքացիական» և «քրնարական») տարբարժանումները:

Մեզ հասած 38 քերթվածներից հեղինակի ձեռքով թվագրված առաջին ոտանավորը 1867-ին է («Իցի՛վ թե»), վերջինը՝ 1871-ին, հավանաբար նույնամբեր-դեկտեմբերին՝ հիվանդութեան պատճառով ընդհատված («Երեկոյան բալն կը սողար...»): Ընդամենը քառամյա կամ մի քիչ ավելի մի ժամանակահատված:

Գուրյանագիտութիւնը հակված է բանաստեղծի ուժը տեսնելու վերջին տարում ստեղծված երգերի մեջ: Եվ դա բնական է ու բացատրելի: Թեկուզ շատ կարճ, բայց թվարկվող տարիների փորձը, գրական ընթերցումները, ուսումնառութիւնը Սկյուտարի ճեմարանում, թատրոնի արվեստասեր միջավայրը, թարգմանական աշխատանքը, մյուս կողմից՝ օր առ օր խտացող մահվան սոսկումը այդպիսի արդյունք ենթադրում են: Սակայն հիմնավոր բացատրութիւն դժվար է տալ գուրյանագիտութեան նույնքան ճշմարիտ վերապահութեանը («բայց դրանց մեջ ոչ բոլորն են նույն ուժով գրված»), երբ այդ բացատրութեան առարկան քերթվածների լեզուն ու ոճն է: Որոնման ճանապարհի արտահայտութիւններ, ազդեցութիւններ, ձևի ու ոճի, հղացման ու արտահայտման թերութիւններ, գրաբարյան բառեր ու բառաձևեր, բնական, նաև անհարկի նմանողութիւններ... Անշո՛ւշտ: Փնտրեք դրանք մանավանդ մինչև 1871-ը գրված ոտանավորներում, բայց մի շրջանցեք նույն 1871-ի գեղարվեստական անկատարութիւնները՝ «նվեր հիշատակի առ Պ. Հ. Ծանֆեսճյան», «նոր սև օրեր», «Առ կույսն», «Մանուկն առ Խաչ», «Իմ հանգիստը», «Առ մայիս» և այլն¹:

Քերթվածների թեմատիկ-գաղափարական բաժանումը դարձյալ ենթադրում է լեզվաոճական բովանդակութեան ինչ-ինչ դրսևորումներ. Գուրյանի քաղաքացիական երգերը հետաքրքրութիւն են ներկայացնում գաղափարական առումով. «Դրանց գեղարվեստական արժեքը մեծ չէ: Վերջին հաշվով իրենց արվեստով դրանք չբերեցին որևէ շոշափելի նորութիւն»²: Քնարական տարրի բացակայութիւնը, ջերմութիւնից ու հույզից զուրկ լինելը, հետադարձութիւնը, պաթոսը, անգամ կլասիցիստական վերամբարձութիւնը,

¹ Հղումները կատարելու ենք Պ. Գուրյանի երկերի ակադեմիական հրատարակութեանից (Պ. Գուրյան, Երկերի ժողովածու երկու հատորով, հ. 1-ին, Եր., 1971, կազմ.՝ Ա. Շարուբյանը, խմբագրութեամբ՝ Պ. Սևակի)՝ պահպանելով ուղղագրութիւնը և եջելով միայն համապատասխան էջը շարադրանքում:

² Ա. Շարուբյան, Պետրոս Գուրյան, Երևան, 1972, էջ 186—187:

հանդիսավոր ճարտասանութիւնը, երբեմն էլ գրաբարյան քերականական ձևերի ու ոճերի շարաշահումը այդ քերթվածներում արդեն նկատված հատկանիշներ են:

Սակայն այդօրինակ դասակարգումը չի մեղմում նոր հետազոտողի ցանկութիւնը՝ թվարկված գեղարվեստական մեղանշումները փնտրելու «քնարական» բնորոշված տաղերի գոնե մի մասի մեջ:

Պ. Դուրյանի մուտքը գրականութիւն եղավ միանգամից: Բացառիկ տաղանդի, գուցե և ողբերգական ճակատագրի բերումով գրական հասունացման իրեն վերապահված ճանապարհը երիտասարդ բանաստեղծն անցավ աննախադեպ սրագ, գրեթե աննկատու նոր-նոր գրականութեան աշխարհ ոտք դրած պատանին արդեն 1871-ին ստորագրում է քերթվածներ, որոնցից նույնիսկ մեկ-երկուսը կբավեն ճշմարիտ բանաստեղծի համբավը պսակավորելու:

Նա շխուստիեց նաև անհաջող փորձերից: Լեզվական նախասիրութիւններ, բնական սղոցեցութիւններ, զգացածն ու ապրածը արագ, երբեմն անմշակ թղթին հանձնելու փափագ, հոգեվիճակի բարդ ու անիմանալի ելեէջումներ, դրանցով պայմանավորված՝ ոռմանտիկական մտածողութեան դարձ, — այս բոլորը հազիվ թե հիմնավոր պատճառներ չեն:

Այնպես որ Պ. Դուրյանի շփածոյի ժամանակագրական ու թեմատիկ բաժանումները հիմք ընդունելը քիչ բան կարող է տալ այդ շփածոյի լեզվի ու ոճի ուսումնասիրողին, թեև, պիտի ընդունել, որ դրա լավագոյն մասը ստեղծվել է հենց 1871-ին, և բանաստեղծի տաղանդի ուժը լիութեամբ դրսևորվել է հենց անհատական-քնարական բանաստեղծութիւնների մեջ:

Այս մտեցումսով Պ. Դուրյանի շփածոյում կարելի է առանձնացնել երկու շերտ. 1) Քերթվածներ, որոնք հիմնականում ստեղծվել են մինչև 1871-ը, «քաղաքացիական», բայց նաև «քնարական» երգեր են և շարունակում են ումանտիկական բանաստեղծութեան ավանդները: Այդ սահմաններում «Դուրյանը չի ունեցել ստեղծագործական մեծ թռիչք, և եթե կուզեք, որպես ոռմանտիկ բանաստեղծ՝ նա զիջում է Ալիշանին ու Պեշիկթաշլյանին, քաղաքացիական պոեզիայի «աշտարակվող» մեծութիւններին, շունի նրանց պաթոսը, հրապարակախոս շունչը, իդեալների խոր ընդգծումը և այլն և այլն»³: 2) Քերթվածներ, որոնք հիմնականում 1871-ին են ստեղծված. «քնարական» տաղեր են՝ իրապատում հյուսվածքի ընդգծված հատկանիշներով: Այստեղ Դուրյանը երևում է իր ողջ մեծութեամբ: (Նշված շերտերը պայմանականորեն անվանելու ենք նաև «առաջին» և «երկրորդ» շրջանի բանաստեղծութիւններ):

Այսպիսի բաժանումը միանգամայն ընդունելի է նաև լեզվաոճական տեսակետից՝ Դի բան, որ չենք կարող ասել Պեշիկթաշլյանի շփածո ժառանգութեան աշխարհաբար հատվածի մասին: Նշված շերտերը կամ բաժիններն ունեն լեզվական ու ոճական առանձնացող կարագրեր, թեև, ինչ խոսք, բացարձակ չէ դրանց միջև եղած սահմանը⁴:

Պ. Դուրյանի լեզվի մասին արտուհայտվել են շատերը՝ Ա. Չոպանյանը («Արևմտյան հայոց աշխարհաբար բանաստեղծութեան» լեզվի տեսակետով ճշմարիտ հայրը Դուրյանն է, որ իր բոլոր տաղերը գրած է աշխարհաբար և աշխարհաբար մը, որ գրաբարի ազդեցութիւններն զերծ չըլլալով հանդերձ,

³ Չր. Քամրազյան. Բանաստեղծութեան հազարամյա խորհուրդը, Եր., 1986, էջ 89:

⁴ Մեր խոսքը վերաբերել է հիմնականում Դուրյանի «Երկրորդ շրջանի» քերթվածների լեզվական նյութին:

շատ ավելի մոտիկ է խոսված լեզվին, քան Պեշիկթաշլյանի աշխարհաբարը»⁵, Ս. Հակոբյանը («Եւ Պետրոս Դուրեան եղաւ ոչ միայն արեւմտահայ նոր բանաստեղծութեան, այլ եւ նոր լեզուի ստեղծողը... Արեւմեանի պէս նա էլ եղաւ որոշ ժամանակաշրջանի հայտարար, նոր գրականութեան, նոր խօսքի ու նոր ձեւերի ստեղծագործող»⁶, Հր. Աճառյանը («Դուրեանը աշխարհաբար բանաստեղծութեան հայրն է») ⁷, Գ. Ֆետիսյանը, Լ. Շանթը, Հ. Օշոկանը, Ա. Շարուրյանը, Վ. Գաբրիելյանը և ուրիշներ, թեև այդպես էլ հարցը հետազոտությունների առարկա չի դարձել:

Մեկ-երկու տարի հազիվ է կազմում Պեշիկթաշլյանի և Դուրյանի աշխարհաբար բանաստեղծությունները իրարից զատող սահմանաշրջանը՝ 1864 թ.— 1867—1871 թթ.: Լեզվի զարգացման կամ կանոնավորման այս կարճ ընթացքը, բնական է, բացարձակ ձեռքբերումներ շունեցավ, բայց ունեցավ նկատելի արդյունքներ. որոշ շափով ընդլայնվեցին աշխարհաբարի⁸ գործածութեան շրջանակները՝ գիտություն, վարչական գործունեություն (նկատի ունենք Թուրքիո նոր սահմանադրությունը՝ 1865 թ.), թատրոն, պարբերական մամուլ⁹ և այլն, գեղարվեստական ինքնագիր արձակում գրական լեզուն հաջողված փորձեր արեց իր տեական ու համառ զարգացումը տեղափոխելու իրապաշտ մտածողութեան տիրույթներ (Հ. Պարոնյան): Ժամանակի գիտական-լեզվաբանական միտքը ընթացիկ մամուլի էջերում կամ առանձին աշխատություններով (Ա. Այտընյան, Ս. Փափազյան), իր հերթին փորձեց սահմաններ գծել նոր գրականի հաղթանակը վավերացնելու համար՝ ձգտելով հասարակութեանը ներկայացնել աշխարհաբարի առկա օրինաչափությունները, գրանով իսկ նպաստելով գրավոր լեզվի միօրինականացմանը: Այսուհանդերձ, նոր գրական հայերենը դեռ կանոնավորման ընթացքի մեջ էր, և ինքը՝ Ա. Այտընյանը, լեզվի զարգացման արդի վիճակը գիտական խորութեամբ վերլուծողի դիրքերից պատշաճ է համարում նկատել, որ աշխարհաբարի մշակման գոյություն ունեցող 3 ուղղություններից (նախ՝ լեզուն «իւր բնական ընթացքին թողուլ»՝ խորշելով միայն ռամկական աղավաղումներից և օտարաբանություններից, երկրորդ՝ միշտ գրաբարն առաջնորդ բռնել՝ առանց աշխարհաբարի էությունը խափանելու, երրորդ՝ լեզվի «կամայական կամ ազատ մշակում»՝ նրա ներկա և անցյալ վիճակից անկախ) որևէ մեկին

⁵ Ա. Չոպանյան, Պետրոս Դուրյանի կյանքն ու գործը, Եր., 1967, էջ 231:

⁶ Ս. Հակոբյան, Պետրոս Դուրեան, Վիեննա, 1922, էջ 7, 78:

⁷ Հր. Աճառյան, Պատմութիւն հայոց նոր գրականութեան, էջմիածին, 1906, էջ 84:

⁸ Ժամանակակից հայ լեզվաբանությունը կարծես սկզբունքորեն լուծել է հայոց լեզվի զարգացման երրորդ փուլի վերաբերյալ «քաղաքացիական հայերեն», «նոր գրական հայերեն», «աշխարհաբար», «գրական աշխարհաբար» և այլ հասկացությունների տարբերակված գործածության հարցը (տե՛ս Գ. Զահուկյան, Հայոց լեզվի զարգացման փուլերը, Եր., 1964, էջ 31) և «Աշխարհաբար» բառը գործածել ենք ոչ թե սեռա... նույն նոր գրական հայերենի նշանակությունը (ինչպես առաջարկում է Թ. Խլիանյանը, տե՛ս նոր գրական հայերենը 17—18-րդ դդ., Եր., 1979, էջ 16), այլ «գրական աշխարհաբար» անվանումից սահմանազատվող իմաստով, քանի որ, ինչպես նկատում է Լ. Նզելյանը, դրանք «և՛ ժամանակագրական, և՛ լեզվի մշակվածության որակի առումով տարբեր հասկացություններ են և որոշակիորեն պետք է տարբերվեն միմյանցից» («Գրական աշխարհաբարը և արևելահայ պատմավեպի լեզուն», Եր., 1990, էջ 23):

⁹ 1865—1871 թթ. միայն Պոլսում հիմնադրվել է մոտ քսան անուն նոր պարբերական, որոնց թվում՝ մշակութային-բանասիրական որոշակի ուղղվածություն ունեցող հանդեսներ ու թերթեր՝ «Էրիզա», «Նփրաա», «Նրկազունտ», «Արևելյան մամուլ»: Շարունակում էին հրատարակվել մասամբ բանասիրական և գրական բովանդակություն ունեցող «Մասիս» (1852—1908), «Մեզու» (1856—1874), «Մազիկ» (Ջյուռեհա, 1861—1865, Կ. Պոլս, 1865—1867) առաջադիմական պարբերաթերթերը (տե՛ս «Շայ պարբերական մամուլը», կազմ.՝ Մ. Բարլոյան, Եր., 1986):

նախապատվությունը տալը դժվար է. «առ այժմ դեռ արտորալու ժամանակը հասած չ'երևար,— գրում է նա,— եւ ոչ ստիպիչ հարկ մը կը տեսնուի երէ- քէն մէկը բացարձակապէս որոշելու՝ իբրեւ միակ գործողութիւն, քանի որ ոչ ոք իւր վրայ պարտաւորիչ հեղինակութիւն մը կը ճանչնայ»¹⁰, Բացի այդ, արեւմտահայերենի վրա տակավին նկատելի էր գրաբարի ուժեղ ազդեցությունը. Խոսելով «երկնայուզ աշխարհաբարի ենթաշրջանի» հիմնական գծերի մասին՝ Գ. Ջահուկյանը գրում է. «Այս ենթաշրջանը բնութագրվում է նոր գրական հայերենի հաղթանակով, գրաբարի արտամղմամբ... Նոր գրական լեզվի արեւմտահայ տարբերակը եւ ընթանում է մշակման ու զարգացման, որոշակի հունով, ընդ որում ավելի ուժեղ է զարգացում գրաբարի ազդեցությունը»¹¹:

Լեզվի մշակման գործը դեռ շուտով չ'արցնելու ներքին և՛ բառապաշարի, և՛ քերականության մեջ՝ գրաբարյան բառերի, արտահայտությունների ու դարձվածների գործածություն, գրաբար, որոշ չափով նաև նեղբարբառային քերականական ձևերի ու կառուցների հաճախածություն, գործածվող, բայց դեռ չ'այտնացած և ընդհանրական շարժած մի շարք զուգահեռների առկայություն և այլն¹²:

Դրոյսունի լավագույն քերթվածներում (թվով մոտ տասներկու) կարելի է հանդիպել այդ երևույթի դրսևորումներին: Դրանով հանդերձ սակայն այդ քերթվածների լեզուն կառուցվածքով, իմաստարանությամբ, բառաձևային համակարգով, հնչյունական կազմով հիմնականում ժամանակի դրական արեւմտահայերենն է:

Այս պնդումն առավել համոզիչ դարձնելու համար այդ քերթվածների բնձեռած լեզվական նյութի մեջ առանձնացրել ենք, Գ. Սևակի բնորոշմամբ, «վստահելի բաղադրիչները»¹³, որոնք աչքի են ընկնում որպէս այդ շրջանի գրական լեզվի նորմավորման ընթացքի հիմնական տարրեր: Դրանք վերաբերում են լեզվական բոլոր մակարդակներին:

Հնչյունական համակարգը բնութագրվում է ժամանակի գրական արեւմտահայերենի սրտասանական նորմերի և հնչյունափոխական կանոնների համեմատական կայունությամբ: Դրա արտահայտություններից են՝

ա) բաղաձայնական երկշարք համակարգի՝ պատմական հնչյունափոխությամբ պայմանավորված ձայնեղ-խուլ հարաբերության ուղղագրական դրսևորումները, որոնք գրավոր խոսքում երևում են փոխառյալ կամ օտար բառերի և որոշ հայերեն բառերի գրության մեջ՝ Սիպիւր (26), կլրւանիտ (34), գանկ (39), կազին (45), տծգույն (90), ըՍքամպուլ (83), Պաղլար-պաշի (44, 81),

բ) գրական արեւմտահայերենում գործող հնչյունափոխությունները, որոնք գրեթէ ամբողջությամբ կապվում են միջին հայերենում հանդիպող բարբառային հնչյունափոխական երևույթների հետ, ինչպես՝ ր, ա, ո ձայնավորների հնչյունափոխությունը՝ ցակտիս (63), սորվիլ (90), բածկին (56), դողդրղալով (53), մ'է (56), մ'որ (55), ապա՝ ստ, սկ, զմ և նման հնչյունական պակցություններից առաջ նախահունչ ր-ի ընդգծված արտասանությունը րզմայլիլ (18), րսովեր (89), րսուրուկ (77), ըՍքամպուլ (83), դրափոխությունը կը բորնկի (56), սորվիլ (90), բրորնկած (58), ձևակազմության մեջ անհնչյունափոխ հիմքերի համեմատական կայունությունը ծոծուրակին (50), շուֆին տակ (65), ջուրերն (92), հնչյունափոխական այլ կարգի իրողություններ

¹⁰ Ա. Այլընեան, Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Եր., 1987, էջ 258—259,

¹¹ Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Եր., 1969, էջ 64, 67:

¹² Վ. Անեմյան, Գրական արեւմտահայերենի ձևավորումը, Եր., 1971, էջ 226—227:

¹³ Սևակ, Ժամանակակից հայերենի համառոտ պատմություն, Եր., 1948, էջ 25:

առտրվան իրիկվան (48), զարևեր (77), թրթրուն (13), շեն կրնար (19), ալ (88), բլլալ (50), ինկած (42) և այլն:

Շատ շեն նեղբարբառային (հատկապես պոլսահայ բարբառին բնորոշ) հնչյունափոխական կամ արտասանական երևույթները՝ ճանաչել > ճանչել (49), ժպիտե > ժրպտե (77), մայր > մար (51), երբ որ > երբոր (73), առաջին > առջին (51), կապույտ > կապուտ (48), վիհեր > վրհեր (61), պուլպուլ > բուլբուլ (62), փայլփլիլ > փալփլիլ (18) և այլն:

Հնչյունական այս կարգի իրողությունների մի որոշ մասը, անշուշտ, բըխում է շափածո խոսքի առանձնահատկություններից, տաղաչափական պարտադրանքների արդյունք է: Բայց խնդիրն էլ հենց այն է, որ ժամանակի բահաստեղծները, այդ թվում նաև Դուրյանը, անկախ ոճական հետաքրքրություններից, իրենց շափազանց ազատ էին զգում զուգաձևությունների ընտրության մեջ՝ հեշտով օգտվելով ժամանակի գրական լեզվի ընթացքի անկանոնություններից:

Նկատի ունենալով արևելահայերեն աղբյուրներում ընդհուպ մինչև 19-րդ դարի կեսերը նկատվող հնչյունափոխական երևույթները՝ Ռ. Ղազարյանը գրում է, որ «գրանք ամբողջապես և որոշակիորեն համակարգված չէին, շունեին միօրինակ ու կայուն արտահայտություններ: Նորմավորված չէր գրության և սրտասանության միջև գոյություն ունեցող կապը: Հնչյունական ուղղագրության մեջ շատ անգամ չպահպանվելով ավանդական կանոնները՝ գրությունը հուճախ համապատասխանում էր արտասանությանը, որի հետևանքով առաջ էին գալիս բառերի գրության բազմազան ձևափոխություններ, ըստ որում միևնույն բառը գործածվում էր և՛ գրական, և՛ բարբառային ձևերով»¹⁴:

Ի տարբերություն արևելահայերենի՝ արևմտահայ աշխարհաբարի հընչյունական համակարգի գրականացումն ընթացավ միջին հայերենի ազդեցությամբ և տակավին 70-ականներին (և ավելի ուշ) շարունակում էր կրել վերջինիս արտասանական-հնչյունական համակարգի բազմապիսի երևույթների (որոնցով անհամեմատ հարուստ է միջին հայերենը) ազդեցությունը: Դուրյանի քերթվածներում ավանդական ուղղագրության կանոնները շրջանցող գրության երկձևությունները [(ղծգույն (55)—տծգույն (86), միևակ (40)—մեևակ (49), արտասուփ (13)—արտսուփ (15)—արցունփ (27), անբիծ (60)—ամբիծ (90), կուաին (90)—կույսին (41), այն (88)—ան (89)], կամ շեղումները [(օվկևանի (55) = գր. արևմտ.՝ ովկեանի, վրհեր (69) = վիհեր, փալփլող (89) = փայլփլող, օվասիս (68) = ովասիս և այլն)] այս իրողության առանձին արտահայտություններն են, որոնք դեռ սեական կյանք պիտի ունենային արևմտահայերենում:

Քերթվածների բառապաշարը արևմտահայերենին բնորոշ բառազանձն է: Այդ բառապաշարի միջուկն են կազմում այն բառերը, որոնք ընդհանուր են հայերենի զարգացման բոլոր փուլերի համար, և որոնց ճնշող մեծամասնությունը նախորդ փուլերից գրական արևմտահայերենին է անցել անփոփոխ, իսկ որոշ մասը՝ ժողովրդախոսակցական լեզվին կամ բարբառներին հատուկ փոփոխված ձևերով՝ կապված հիմնականում հնչյունափոխական երևույթների հետ, ինչպես՝ երեկո, կառփ, անցնիլ, լուսին, սև, պես, սա, ով, Աստված, ըսել, ինչ, վառել, նայիլ, մխալ, բույր, թուշիլ, մաշիլ, կույս, աստղ, ծնել և այլն:

Գրաբարից վերցված բառաշարն են բաղադրում այն բառերը, որոնք գործածական էին 70-ականների արևմտահայ գեղարվեստական գրականու-

¹⁴ Ռ. Ղազարյան, Արևելահայ վաղ աշխարհաբարը ըստ Զաքարիա Ազուլեցու «Օրագրության», «Բանբեր Երևանի համալսարանի», 1993, № 2, էջ 12:

թյան լեզվում և հիմնականում հասկանալի էին կամ կարող էին հասկանալի լինել ընթերցող լսարանին, ինչպես՝ հաջաղ (= երեսի քող (55), հաճագյն (= նման (55, 61), հուսկ (= վերջին (60), ժպրհիլ (= հանդգնել (60), հրբատ (= հրով լի, խարույկ (60), հար (= միշտ (61), խոկ (= մտածում (60), հավելուլ (= ավելանալ (60), վես (= հպարտ (84), համայր (= բազում ամիսներ (86) և այլն: Դրանց գերակշռող մասը ավելի ուշ՝ 90—900-ականներին, անցավ գրական լեզու՝ որպես գրաբարից ավանդված բառաշերտ՝ նույնիսկ որոշ հատվածի համար (վնմ, վես, տնանկ, գերթ, հուսկ, զի, աբտուր, խոկ և այլրն) մասամբ միայն կրելով հնաբանություններին հատկացվող ռճական արժեքը:

Բուն գրաբարյան իմաստով բառերի գործածությունը այս քերթվածներում խիստ սահմանափակված է: Ծղակի օրինակներից է գրաբար տոնել բառի կիրառությունը անել իմաստով (դագաղս առնե իր համըր քայլ (86), որը ժամանակի գրական աշխարհաբարի իմաստային ուղորտի դրսևորումներից է, թեև ոչ պակաս հաջողությամբ այն կարող է ընկալվել նաև աշխարհաբար տոնել (գրաբ.՝ առնուլ) բառի փոխաբերական նշանակությամբ (քայլ առնել):

Ինչ վերաբերում է բարբառներից (կամ միջին հայերենից) ավանդված և խոսակցական արևմտահայերենին բնորոշ բառաձևային տարրերին, որոնք աստիճանաբար կայուն արտահայտություն էին ստանում գործառվող լեզվի գրական տարբերակում, այդ թվում արդեն նաև գեղարվեստական գրականության լեզվում, դառնում գրական արևմտահայերենը բնութագրող հիմնական բառապաշարային տարր, այստեղ անհամեմատ ակտիվ դիրքում են, ինչպես՝ մինակ (= միայնակ (48), հոս (= այստեղ (49), հոդ (= այդտեղ (53), հոն (= այնտեղ (53), հուշիկ (= կամաց (31), հով (= մոտ (50), մնաբ բարով (60), առեն (= ժամանակ (87), համբր (= դանդաղ (77), ետբր (= հետո (60), պրլպրլալ (= փայլփլել (63), պլլրվիլ (= փաթաթվել (61), մարիլ (= հանգչել, ուշաթափվել (55), մրտիկ ընել (= լսել (50), ձգել (= նետել (89), անցնիլ (= ուշաթափվել (55, 78), մր (= մի (50), հատնիլ (= սպառվել (57) և այլն:

Օտարաբանությունների հարցում Դուրյանը շարունակում է իր անմիջական նախորդների սրբագործած ավանդույթը. սկզբունքորեն հրաժարվում է թուրք-պարսկական բառերից ու արտահայտություններից: Միակ բացառությունը բուլբուլն է, որ սոխակ (25, 30) համարժեքի հետ գործածում է հեղինակը: (Մի առիթով նա հիշեցնում է, որ դա իր լեզվական նախասիրությունների արտահայտություններից է)¹⁵: «Առաջին շրջանի» գործերում հանդիպում են օտարաբանություններ, որոնք ռճական որևէ երանգավորում չունեն, ինչպես՝ կրանիտ (34), կազ (45):

Նոր գրական լեզուն բառապաշարի հարստացման աղբյուրներ էր փրկությունում՝ գեղարվեստական գրականության, մասնավորապես շափածոյի լեզվի հատկանիշներ ձեռք բերելու համար: Բառակազմական լայն հնարավորությունները, որ ուներ նոր գրականը, ճաշակավոր արվեստագետի համար ճանապարհ էին բացում բառաստեղծման: Բառակազմական տեսակետից Դուրյանի հեղինակային նորակազմությունները առավել կամ պակաս շափով բնութագրվում են և՛ համադրական (առավելապես հոդակապով), և՛ վերջածանցավոր կազմություններով, ինչպես՝ սիրատրոփ (16), վարդատարփիկ (16), տրոմալիբ (16), վարդակարոտ (19), սիրաբախ (24), սիրասուզ (24), աբտուրագոծ (36), բոցագես (56), երկնազվարթ (41), սիրաբույր (91), գե-

¹⁵ Տե՛ս Ք. Էփեհեան, Հնդարձակ կենսագրութիւն բարեյիշատակ Պետրոս Դուրեանի, Կ. Պոլիս, 1893, էջ 86:

դուհի (55), փառաճանճանչ (47), դալկահար (25), սիրահող (39), սիրադեմ (13), սրտմաշուֆ (91), Պեշիկթաշլյան՝ սրտամաշուֆ), աստղալույց (44), ծաղկոտ (33), սևահար (72), սիրանկեր (83), մեղրամոմե (55), սիրակաթ (16), մահադեմ (86), լուսահոսֆ (24), համասրփոեկ (87), բուրվառեկ (50), բոցավառ (55), (— գրք. բոցավառեակ (49), արտասվաթուրմ (37), ծաղկաներկ (42), հայրենահուշ (26), սիրահող (39), սիրակայծ (38). հողմածածան (18) և այլն: նախածանցավոր բառեր մեզ հանդիպած օրինակներում շկամն¹⁶:

Անշուշտ, այն կարծիքին շենք, որ նշված նորակազմութունների հեղինակը անպայմանորեն Դուրյանն է: Դրանք տալիս ենք համեմատությամբ նոր հայկազյան և միջին հայերենի բառարանների¹⁷: Ձի բացառվում, որ մինչդուրյանական մատենագրության մեջ (հնարավոր է նաև գեղարվեստական նմուշներում) սրանք գործածված լինեն այս կամ այն հեղինակի կողմից: Բայց հարցը ներկայացնելիս մենք առաջնորդվել ենք հետևյալ հանգամանքներով. նախ՝ գրական աղբյուրներում դրանց առաջին անգամ հանդիպում ենք Դուրյանի գործածությամբ: Ապա՝ այդ բառերը և՛ բառակազմական, և՛ ոճական-գեղագիտական նկարագրով ակնհայտորեն կրում են Դուրյան անշատականության կնիքը: Հետո՝ դրանք գեղարվեստական գրականության մեջ շրջանառության են դրվում այս հեղինակի շնորհիվ: Եվ վերջապես՝ բոլոր նման պարագաներն ունեն պայմանական նշանակություն: Այսպես օրինակ՝ գեղուհի, մեղրամոմե, վերջալույս բառերը նշված բառարաններում շեն արձանագրված, բայց առաջին հայացքից դժվար է հավատալ, որ դրանք մինչև Դուրյանը գործածության մեջ չեն եղել:

Անարանության մեջ գերիշխում են ժամանակի գրական արևմտահայերենի օրինաչափությունները: Բայի խոնարհման համակարգում քիչ գործածություն ունեն գրաբարաձև սահմանական ներկան և անցյալը. գրական արևմտահայերենին բնորոշ հայտնի «շեղումներից» (զալ, լալ, տալ) բացի իսպառ դուրս է մղված միջին հայերենի կու եղանակիչը. սահմանական ներկան և անցյալը բաղադրվում են միայն կը (կ՛) եղանակիչով: Այսպես, օրինակ՝ «Տրտունջք» բանաստեղծության մեջ նշված ժամանակաձևերի տասներեք գործածություններից յոթը արևմտահայերենին հատուկ կազմություն ունի (կը պըլպըլաֆ, կ՛երթամ, կ՛ըսեմ, կը դողդոջեմ, կ՛ուզեմ, կ՛ըլլան, կ՛ուզե), 6-ը՝ գրաբար (թըռին, ժպըրհի, փըրփըրի, շանթափաթե, փշրե, խուզաբկե): «Ձղջում» քերթվածում այդ ժամանակաձևի զուտ գրաբարյան կազմությունը ընդհանրապես բացակայում է. 6 դեպքերից 3-ը կը (կ՛) եղանակիչով են (կ՛առնեի, կ՛այրեի, կը պլպլուր), 3-ը՝ որպես պակասավոր-անկանոն բայերի ձևեր, այսպես կոչված ընդհանրական կազմության են (էի, ունեի, ու-

¹⁶ Օրինակները բերվում են Դուրյանի և՛ «առաջին», և՛ «երկրորդ» շրջանի քերթվածներից: Ինչ վերաբերում է իգական սեռի համար եւ-ի փոխարեն նե-ի գործածությանը, որ երբեմն վերագրվում է Դուրյանին, մեզ հայտնի առաջին օրինակը արևմտահայ շափածոյում տալիս է Մ. Պեշիկթաշլյանը՝ «Աշուն, երգ առ նէ» (տե՛ս Երկեր, Եր., 1987, էջ 91): Պարզապես Դուրյանի շնորհիվ այն որոշ շափով մասսայականացավ, նույնիսկ դարակազմի արևմտահայ մատուցում («Անահիտ», «Մասիս») դարձավ բանավեճի նյութ, բայց այդպես էլ իր տեղը չգտավ գրական արևմտահայերենում:

¹⁷ Տե՛ս Հ. Գաբրիել Ավետիսեան և ուրիշներ, նոր բառգիրք հայկազան լեզուի, հ. 1-ին, Եր., 1979, հ. 2-րդ, Եր., 1981, Բ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, հ. 1-ին, Եր., 1987, հ. 2-րդ, Եր., 1992, Օգտվել ենք նաև Հր. Աճառյանի «Հայերեն արևմտական բառարանից» (հ. 1—4, Եր., 1971—1979), այստեղ համապատասխան արմատների տակ՝ մեզ հետաքրքրող բառերի մի մասի դիմաց կա «նոր բառ» կամ «նոր գրական բառ» նշումը:

ներ), իսկ «Թրքուհին» բանաստեղծության մեջ 25 օրինակից միայն 3-ն է դրաբար՝ տրոպիկ, վառն, գոչնմ:

Նույն ժամանակաձևերի ժխտական խոնարհումներում բացարձակորեն դործում են աշխարհաբարի ձևերը՝ չ'են խայտառ, չ'են կրնառ, չ'են բոսմիր, չ'են քրչեր, չ'են մեռնիր (52, 53), չ'են կրնառ (51), չ'են տառ (61)՝ խոսակցական աշխարհաբարին հատուկ առանձին դրսևորումներով՝ չը ծաղրեր (= չի ծաղրեր (92), չը սիրեր (= չի սիրեր (49), չը սիրեմ (= չեմ սիրեր (64) և այլն:

Վաղակատար ժամանակաձևերը, անցյալ կատարյալի և հրամայականի կազմութունները նույնպես չեն ճանաչում շեղումներ դեպի գուտ գարբարը՝ ծաղրեր են (62), ութ օրն է նա գրծեր (65), ժամրդ է հասեր (88), ուխտեցինք (58), լրսեց (59), տրվիր (60), ըսին (60), տրվե՛ք (61), գիտցե՛ք (86), բո՛ղ (90), գրնա՛ (90), գրտի՛ր (90), մի՛ սուրվիր (90) և այլն:

Բայակազմութւն մեջ և բայերի լծորդութւններում նկատվում է բարբառների միջնորդութւնը որոշ փոփոխութւններով արևմտահայերենին անցած ձևերի ակտիվութւնը: Բազմաթիվ օրինակներից բերենք մի քանիսը. ծնանել > ծնել (55), անկանել (իմ) > ընկնել > իյնալ (15, 42), լինիմ > լլլամ (50), վախենալ > վախնալ (91), մոռանալ > մոռնալ (65, 90), մեռանիլ > մեռնիլ (79), բաժանել > բաժնել (87) և այլն, թեև դեռ հանդիպում են նաև գրաբարյան կամ գրաբարակերպ կազմութւններ՝ քրոին (60), դիպիմ (60), էլանել > էլնել > էլլել (60), հանգչեցունել (78) և այլն:

Գրաբարի անցյալ դերբայի գործածութւնը գրեթե դուրս է մղված: Նըշված 12 քերթվածներում արձանագրվում է ըսդամենը երեք դեպք՝ շաղյալ (78), հյուծյալ, դյուծյալ (89), (վերջին երկուսը, ի դեպ «Երեկոյան...» տաղում, որը առհասարակ աչքի է ընկնում գրաբար տարրերով): Դրա փոխարեն մեծ ակտիվութւն է ձեռք բերել հարակատարը՝ բըրընկած (58), չ'այրած (78), չը գրկած (78), չ'օգնած (78), առած (90), գրված (53), գոզած (51) և այլն:

Ձևաբանական այլ իրողութւններում նկատվում են հետևյալ տեղաշարժերը.

ա) Անհամեմատ նվազել է գոյականի (կամ գոյականի իմաստ ունեցող բառերի) գրաբարյան հոգնակիի գործածութւնը: Բավական է նշել, որ երեք քերթվածներում («Սիրել», «Ներա հետ», «Տրտունջք») առկա մի քանի տասնյակ օրինակներից միայն վեցն են հստակ գրաբարաձև՝ փրթիք (48), շող մարեին (57), վարսն (58), տերև (62), ծաղկունք (62), երագս (62): Մյուս քերթվածներում դրանք փոքր-ինչ հաճախված են: Որոշ ակտիվութւն են երևան բերում գոյականի հոգնակի սեռականի հոլովաձևերը՝ քրմաց (49), աստեղց (58), երկնից (58, 60), հոգվոց (60), շրթանց (60), սիրահարաց (90), ամպոց (52), սիրայնոց (89), տերևաց (91) և այլն: Թեև չպետք է անտեսել այն հանգամանքը, որ գրաբարյան հոգնակիի և՛ ուղիղ, և՛ թեք ձևերը խորթ չեն գրական արևմտահայերենի, ինչպես նաև պոլսահայ բարբառի¹⁸ ոգուն ու կանոնին և առանձին կառույցներում պահպանվել են առայսօր:

բ) Հոլովման մեջ և հոլովական համակարգում հազվադեպ են բուն գրաբարյան կառույցները՝ Աստուծոյն (60), հայլվույդ (52), հոգվույս (60), ալվույն (50), հեծեծմամբ (87), բարյալ (51), անձկալ (54), թոչնո (91): Դրան հակառակ անհամեմատ ակտիվ գործածութւն են ձեռք բերել ինչպես գրաբարից գրական արևմտահայերենին ավանդված ձևերը՝ գոռովի (57), սիրո (57), մահվան (60), շողի (60), կրակի (61), գաւնան (62), Աստուծա (62), այնպես էլ բարբառ-միջին հայերեն-արևմտահայերեն կառույցները՝

¹⁸ Տե՛ս Լր. Աճառյան, Քննութւն պոլսահայ բարբառի, Եր., 1941, էջ 90—92, 99—100:

կլանի (49), առտրվան (48), իրիվկան (48), մեկուն (65), ժրպիտին (65), գրբելու (անորոշ սեռ. 90), ձրմեկվան (90) և այլն: Բացառականը հանդես է դալիս համադրական (աննախդիր) կազմությամբ: Դուրս է մղված դեռևս միջին գրական հայերենում և աշխարհաբարի վաղ շրջանում գործուն գրաբարյան բացառականի վերլուծական կառուցվածքը՝ ի (յ) նախդիր և սեռական-տրական ձևի զուգորդումներով: Որոշյալ առման դեպքում կայունության է միտում համապատասխան և որոշիչ հոդով կաղապարը. են (էն)՝ երկնեհն (49), ձեռեհեհն (58), դեմեհն (64), առեհն, լանջեհն, առեհն (90). -ե (է)՝ ժրպտե, գեղե, հուրե (78) և այլն: Առհասարակ, խիստ սակավ են գործածվում նախդրավոր կապակցությունները, չի հանդիպում գոյականների հայցական զ նախդիրը, որն ի դեպ Աճառյանը համարում է աշխարհաբարը նախորդ փուլից զատող բնորոշ նշան¹⁹: (Միակ բացառությունը «զհորիզոն» բառաձևն է «Երեկոյան...» քերթվածում (91):

գ) Դերանունների ուղիղ և թեք ձևերում որոշ բացառություններով գործածվում են կա՛մ գրաբարից վկայված կազմությունները՝ իմ (43), որուն (48), զ՛իս (57), ինձ (աբ. 57), դու (60), ամենեք (62) և կամ լեզվի հետագա զարգացման ընթացքում ստեղծված կամ ձևափոխված կառույցները՝ իր (57), իրաբու (58), զինք (90), քու (61), անոր (61), ինձի (62), անոնց (91), դուն (34), ինձմե (51) և այլն: Զուտ գրաբար հոլովածները, ինչպես ասվեց, բնավ գործուն չեն՝ նոխ (62), որք (60, 65), ոյր (64), զորս (65), նորա (78), յ՛իս (58) և այլն:

դ) Առկայացման քերականական կարգում անհամեմատ ընդլայնվել է ստացականության իմաստը՝ «— Քնարդ է ցուրտ սիրտ և սերդ ցավ» (49), «Ձեռն տարավ կուրծին...» (57), «Փրփրփրի ներսը...» (61), «Դու որ նակտիս վարդն և բոցն աչերուս նըլեցիր...» (60) և այլն: Ինչ վերաբերում է գրաբարյան մի անորոշ հոդին, ապա արձանագրվում է դրա գրաբարաձև (վերջադաս) գործածության մեկ դեպք՝ քնարով մի (49), մյուսները գրական արևմտահայերենին հատուկ ձևեր են՝ բույլ մը, փունջ մը, սիրտ մ'որուն (48), շանթ մ ըլլամ (61), օր մը (65), գեղումի մը (55) և այլն:

Եվ վերջապես, Դուրյանի ինչպես «առաջին», նույնպես և «երկրորդ շրջանի» գործերի լեզվական նյութը ընձեռում է քերականական ձևեր, որոնք արևմտահայ բարբառներից գրականին անցած իրողություններ լինելով՝ կա՛մ չեն արձանագրվում մինչդուրյանական շափածոյում, կա՛մ գործածվում են խիստ հազվադեպ, ինչպես՝ ա) գոյականի կամ գոյականի իմաստ ունեցող բառերի հոգնակի ստացական ձևերը՝ «Փոսն զոցելնուն հետ՝ եվ այս աշխարհն ալ... զոցեցին» (70), ոսքերնիս (77), շուքերնուն (91), երկուքնիս (93), բ) որոշ անկանոն բայերի խոնարհումներ՝ ուսան (91), ուսուց (62), վերցա՛ւր (37), գ) գոյականի կրկնակի ստացականության (հոգառու գոյական + ստացական վերադիր) կառույցներ՝ քու լանջդ (13), քու կողդ (61), քու խոքիդ (54), իմ փրփուրներս (88), դ) գործիական հոլովով դրված բառի՝ ստացական-դիմորոշ հոդով ձևը՝ սիրովն անշեջ (11), ե) հատկացուցիչի որոշյալ առման դեպքում՝ հատկացյալի որոշյալ հոդով գործածվելը՝ քաղցին ժխոն (91), դեմեհն հարա կուսին (90), հյուլին մուր-անունը (79), զ) դերանունների հոլովական ձևեր՝ ինք (90), անկե (28) և այլն:

Անշուշտ, Դուրյանի նշված գործերի ձևաբանական կառույցը բնութագրվում է գրաբարից վկայված քերականական նաև այլ իրողություններով՝ պրակտիկ/պրակտիկ (59), «Գիշերն միշտ դազադս, աստղերը՝ ջահեր (= դազադներ (61), քրթումս շրթանց (= թրթոումներ (60), ինչպես նաև ժամա-

¹⁹ Տե՛ս Հր. Անտոյան, Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս, Եր., 1951, էջ 443:

նակի խոսակցական լեզվի կամ պոլսահայ բարբառի այլ բաղադրիչներով (ցածուն (90), գ'անի (49), ուսկից (90), բնկեմ (61), նանչել (49), վրհեմ (61), չը սիրեմ (= չեմ սիրեմ (64), քավուտֆներ (62), փրփուրֆիդ (52) և այլն), անգամ առանձին բարբառակերպ կամ գրաբարակերպ այսպես կոչված ինքնահնար ձևերով (նե, զնե, ներանե, ներա, մարն (= մարելը), հոգյակս (= հիմ հոգին): Բայց միևնույն է, դրանք ևս չեն մեղմում ժամանակի գրական արևմտահայերենի ձևաբանական օրինաչափությունների անպայման գերակայությունը վերլուծող քերթվածների լեզվում:

Շարահյուսական համակարգում (կապակցություն միջոցներ, կապակցության եղանակներ, նախադասություն և այլն) դարձյալ գործում է աշխարհաբարի իրավունքը: Ավելին, առանձին շարահյուսական կառույցներում (խնդրատության և շարադասության մեջ) Դուրյանը հետևողականորեն պաշտպանում է հիմք բարբառ-գրական արևմտահայերեն փոխանցումների կանոնն ու օրինաչափությունը, ինչպես՝

ա) անձի առում գոյականի՝ միշտ ուղղականով (ուղղականաձև հայցականով) ուղիղ խնդրի գործածությունը («... կը սիրե նա Հայն» (29), «Ես կը սիրեմ զիմ Պ...» (65),

բ) օժանդակ բայի՝ կայուն հետադաս դիրքով գործածությունը ստորոգյալի մյուս մասի նկատմամբ, երբ ստորոգյալն ունի նախադաս լրացում («Ինձի կ'ըսեն— ինչո՞ւ լուռ ես» (88), «Ալ ի՞նչ նստեք ես դու հող» (93),

գ) գրաբարյան ավանդների շարունակությամբ՝ զալ բայի պահանջով առանց կապի (այս դեպքում՝ առանց մոտ կապի) տրական հոլովով լրացում ստանալը, երբ այդ լրացումը անձ ցույց տվող բառով արտահայտված տեղի պարագա է («Հծծեց.— կ'ուզե՞ս սիրտ, ե՛կ ինձի» (48),

դ) ժխտական դերանուններով կառույցներում ժխտական դերանուն + դրական բայ կադապարի կիրառությունը (չի գործում կրկնակի ժխտման սկզբունքը)՝ «Ոչ ոք ըսավ— հեզ տղա» (53), «... Ոչ ոք ըսավ սա տղին» (53), «կըրակ ոչ մեկն ունի գըրելու» (90),

ե) սա դերանվան որոշչային կիրառության (սա ցուրտ հողակույտը (78), սա վըճիտ կույսն (64), սա օտար ժըպիտները (65), սա ցուրտ ճակատը (78), սա վարդի (91), սա տղիին (53), վրա կապի շարահյուսական գործառույթի որոշ շափով ընդլայնում (Ես կը դողդողամ իր վրա (65), վաղակատարով ստորոգյալների համեմատությամբ հարակատարով կառույցների նրկատելի ակտիվությունը և այլն:

Շրջադարձային չէ Պետրոս Դուրյանի կատարած գործը զուտ լեզվական ոլորտում: Սակայն անկասկած է, որ դա արևմտահայ շափածոյի լեզվի զարգացման մեջ Մ. Պեշիկիթաշլյանից հետո հաջորդ լուրջ քայլն է: Արևմտահայ աշխարհաբարի թեկուզ քիչ շափով դարձը գրաբարից, ժողովրդական-խոսակցական լեզվատարների ակտիվությունը ստեղծում են լեզվական նոր որակ: Այդ աշխարհաբարը առավել հղկված է ու մաքուր, առավել մշակված ու կանոնիկ, արհեստական լեզվաձևերով ու կադապարներով հիմնականում չի հակադրվում ժամանակի խոսակցական լեզվին: Միաժամանակ՝ գործառվող գրական արևմտահայերենն է, որ մասամբ միայն զանց չի առնում գեղարվեստական շափածոյին այդ օրերին հատկացվող լեզվական հատկանիշը՝ գրաբարամիտությունը:

Ավելորդ չենք համարում այստեղ մեջ բերել մի հատված «Թրքուհին» բանաստեղծությունից.

Ծեկո է. բացավա է հոբիզոն
Կոտ մը կ'անցնի դագաղի տես համբըրբաց,
Գեղունի մը բնկողմանած առփն հոն,

Պեշիկթաշլյան— Դուրյան կամ առավել ևս Դուրյան-ժամանակակիցներ (Նարայեյ, Ս. Հեքիմյան, Աբր. Ալվազյան, Թ. Քերզյան և ուրիշներ) լեզվական պարզ համադրութիւնը անվերապահորեն խոսում է ի շահ Դուրյանի: Վերը թվարկած գրաբարյան և նեղբարբառային դրսևորումները շին մեղմում այդ շահը:

Աշխարհաբար չափածոյում Մ. Պեշիկթաշլյանի տեղը բնորոշվում է ժամանակի աշխարհաբարին մոտ լեզվով և համեմատաբար մաքուր աշխարհաբարով ստեղծված բանաստեղծութիւններով: Դրանք թվով շատ շին (մոտ երկու տասնյակ) ութ տասնյակի հասնող գործերի շարքում: Գեղարվեստական տեսակետից միաթեք շին. մի քանիսը անմիջական տպավորութիւն տակ գրված ոտանավորներ են, առիթով ստեղծված չափածո գրութիւններ՝ հաճախ առանց լուրջ մտածումի ու հղկման, մյուսները՝ ժամանակի ուշագրավ գեղարվեստական արժեքներից՝ «ՅԱլէմտաղըն այն գեղեցիկ», «Աշուն», «Գարուն», «Զին երջանիկ», «Հայ քաջուհին», «Թաղումն քաջորդոյն» և այլն: Ներքուստ շհաթահարիով գրաբարի նկատմամբ համարումը և նորակազմ աշխարհաբարը շիկատելով բանաստեղծական խոսքի հայտնութիւն միակ ճանապարհը (ստեղծագործական վերջին շրջանում՝ 1864-ից, Պեշիկթաշլյանը դարձյալ դիմեց գրաբարին)՝ այսուհանդերձ ժամանակի գործավոր աշխարհաբարին մոտ լեզվով նա ստեղծեց գործեր, որոնք առաջընթաց քայլ էին արևմտահայ չափածոյի լեզվի պատմութիւն մեջ:

Պեշիկթաշլյանի աշխարհաբար չափածոյի հնչյունական համակարգը և բառապաշարը բնութագրող «վստահելի տարրերը» հիմնականում համընկնում են ժամանակի գրական լեզվի այդ համակարգում առկա տեղաշարժերին և հաստատվող օրինաչափութիւններին: Սակայն Դուրյանի չափածոյի լեզվի համեմատութեամբ այստեղ ակնհայտորեն ակտիվ դիրքում են գրաբարաբանութիւնները (անդոյր, բոմբին, հովանացաւ, կառափ, իւր, մեֆ, զուարթուն, սոյլ, ոյր, արձանագիր, կողկողէի, շիջան և այլն), մասամբ նաև նեղբարբառային բառերն ու ժողովրդական երանգ ունեցող բառակազմական երևույթները (վազվրտել, պլտիկ, թափառիկ, ֆանարիկ, մրտիկ, երբոր, սրխմէ, մինակուկ, պաշիկ, լրոնիկ և այլն):

Չափածոյի գրաբարամիտութիւնը դժվար հաղթահարվող խնդիր էր և դժվար էր հաղթահարվում հենց ձևաբանութիւն մեջ: Մ. Պեշիկթաշլյանի՝ այստեղ քննարկվող գործերը ծանրաբեռն են գրաբարի կամ գրաբարակերպ խոնարհման ու հոյովման իրողութիւններով, նախդրավոր կապակցութիւններով, հոգնակիի կազմութեամբ, դերանունների գրաբար հոլովական ձևերով և այլն: Ահա «Աշուն» քերթվածի միայն առաջին վեց քառատողում գործածված գրաբարաբանութիւնները՝ փայլփրլունֆ, լրցեալ, իւր, հիւթոց, գայր, թերթից, ձերոց, զունեան, ըզբոյր, տերեաց, ի շուֆ, հալէր (սահմ.), ի տես, լցեալ, կուսիկ մի, շնչէ (սահմ.), թրփ (սահմ.), ի թուփ, վարդենիֆ, կողկողէր (սահմ.) հալեր (սահմ.)²⁰:

Այս բոլորով հանդերձ, իշխողը սակայն աշխարհաբարի քերականութիւնն է:

Բնավ հարկը շինք տեսնում Պեշիկթաշլյան— Դուրյան համադրութիւն մեջ ընդգծելու առաջինի գրաբարամիտութիւնը: Նրանց բաժանում է լեզվի զարգացման որոշակի ժամանակահատված: Կար գրական դաստիարակութիւն ու

²⁰ Մ. Պեշիկթաշլեան, Երկեր, Եր., 1987, էջ 81:

գրական միջավայրի խնդիրը (Պեշիկթաշլյանի համար Մխիթարյանները՝ 1839—1845, Դուրյանի համար՝ Պոլիսը և պոլսահայ մտավորական-թատերական միջավայրը): Դեր ունեին անձնական համակրանքներն ու հակակրանքները, համոզումներն ու նախասիրությունները: Ուստի գրաբար-աշխարհաբար-բար-բառ զուգաձևություններում ու տարրնթաց կառույցներում, որոնցով, հասկանալի է, հարուստ էր այդ ժամանակի աշխարհաբարը, Պեշիկթաշլյան բանաստեղծի անվերապահ կողմնորոշումը դեպի նոր լեզվի քերականությունը նույնքան անբացատրելի կլիներ, որքան անիրական:

Մ. Պեշիկթաշլյանի աշխարհաբար բանաստեղծության լեզուն թեև համակված է գրաբարի շնչով, թեև նորմավորման որոշակի աստիճանի հասած նոր գրականը չէ, սակայն դրան ամենամոտ աշխարհաբարն է 50—60-ականների շափածոյում և իբրև այդպիսին՝ մի նոր նշանացույց արևմտահայ բանաստեղծական լեզվի զարգացման ճանապարհին: Դուրյանը շարունակեց այնտեղից, որտեղ կանգ էր առել Պեշիկթաշլյանը:

«Պեշիկթաշլեանի բանաստեղծութիւնը կարդացած ատեն,— գրում է ժամանակի հմուտ բանասեր Գ. Ֆրնտոյլյանը,— ընթերցողին ուշադրութեան մեծ մասը կը գրաւեն այն ընտիր բառերն ու ձևեր՝ գրաբարի գանձարանէն հանուած՝ զորս գիտէ Պեշիկթաշլեան մէկ մէկու ետեւէ շարայարեալ՝ ոսկի շրթայի մը նման: Ուստի իր լեզուն՝ խօսուած լեզուի մը կեանքը չունի, եւ այնքան միայն կ'ազդէ որքան կարող է ազդել այդ էական հանգամանքէն զուրկ լեզու մը... Դուրեան... իր բանաստեղծութեանց մէջ երբէք չի ցուցներ եռանդ՝ գրաբարի մօտենալու կամ անոր ձևերուն ու գեղեցիկ բառերուն դիմելու որպէս զի անոնցմով տայ բարձրութիւն իր ոճին: Ո՛չ, այն անկեղծօրէն զգացող, ամենէն հասկցուիլ, զգացուիլ տենչացող ժողովրդի զաւակը ընդունեց աշխարհաբարը այն կազմութեամբ՝ զոր տրւած էր իրեն ժողովուրդը, եւ այդ բաւեց իրեն ընելու զայն հրաշագան գործիք մը...»²¹:

Ժամանակակից բանաստեղծները գրում էին կամ գրաբար (Խ. Գալֆայան՝ Նարպեյ)²², կամ՝ գրաբարով և գրաբարախառն աշխարհաբարով (Ա. Լուսինյան, Ա. Հեթմյան, Խ. Պասմաճյան, Աբր. Այվազյան, Ս. Ֆելեկյան և ուրիշներ): Վերջիններին ոտանավորներում աշխարհաբար համապատասխան լեզվաբաղադրիչների նկատմամբ առավելում ունեն և՛ նախդրավոր կառույցները (ի հոյլ, յոսկեփունջ, ի մուր, զկտուցն, յանապակ, գթեւն, ի լոյս, զառաւուտ, ի խաղ, ի սեղան, զԱրեգակ, 'նդ հովանեաւ), և՛ գրաբարյան հոգնակիները (Զուարթունք, թիթոունք, ամայիք, գերեզմանք, թելք, փշեալք, աստեղք), և՛ գրաբար բայաձևերը (թուացեալ, բեկեալ, առնէիր (=անում էիր), թաքախէր (=թաթախում էր), նեղքէ (=ճեղքում է), կանչէ (=կանչում է), նրնջէ (=ննջում է) ու հոլովական կազմությունները (ամպոց, վարդից, սենեկին, հովանեաւ, Անկողնոյ, Մուսայն) և այլն²³: Այնպես որ այդ հեղինակների՝ գրաբարի ուժեղ ազդեցությունը կրող և գրաբարից խստորեն ազդված քերթվածների լեզուն հեռու էր Դուրյանի շափածոյի լեզվի հետ համեմատվելու լուրջ հնարավորություններից:

1871-ին Մ. Անեմյանը հրատարակեց իր բանաստեղծությունների անդրանիկ ժողովածուն՝ «Մայիտք եւ արտասուք»: Գրքի լեզուն գրաբարն է, ի բաց առջալ մի քանի ոտանավորներ («Մերուշէ», «Կախէթու գինին», «Այս սէրը

²¹ «Մասիս», Կ. Պոլիս, 1892, թիվ 3965, էջ 195:

²² Տե՛ս Խ. Գալֆայան, Վարդենիք, Քէդոսիա, 1863:

²³ Օրինակները քաղված են նշված հինգ բանաստեղծների շափածո գործերի մեկական բառատողերից, տե՛ս «Նրկագունտ», Կ. Պոլիս, 1870, թիվ 3, էջ 39, թիվ 43, էջ 680, Վ. Քեր-գլիբաշլյան, Պետրոս Դուրյան, Եր., 1959, էջ 97, Ս. Հէֆման, Տազք, քերթուածք եւ թատեր-գութիւնք, Կ. Պոլիս, 1857, էջ 245:

փուշ է» և այլն), որոնց լեզուն միջին հայերենին և ժամանակի բանավոր-
խոսակցական լեզվին մոտեցող աշխարհաբարն է՝ նույնիսկ արևելահայ ա-
ռանձին տարրերի գործածութամբ՝ ծերացրնում է, էղպէս, նախանձել է, էլ,
էս, օնց և այլն: Ահա մի հատված այդ ոտանավորներից.

Տես օ՞նց դաշտերում ծաղկունքն են շքնազ
Տես ի՞նչպէս երկինքն էլ փայլի կապուտ,
Ջուրերն են պայծառ, ծովն էլ է խաղաղ,
Քո մախուր հոգուդ ի՞նչ է պատել մութ
Ափսոս Մերուշէ,
Այս սէրն փուշ է:
(«Այս սէրը փուշ է») ²⁴:

Թ. Թերզյանը բանաստեղծի իր կենսագրութիւնը սկսեց գրաբարախառն
և գրաբար ոտանավորներով (1856): Այդ սկզբունքի պաշտպանը մնաց երեք
տասնամյակից ազելի՝ առանձին դեպքերում դրսևորելով ջանքեր՝ մոտենա-
լու ժամանակի գրական աշխարհաբարին՝ «Երդումն», «Առ մայրն իմ»,
«Կենսք», «Առ քեզ» և այլն: Մի նմուշ հեղինակի այսպես կոչված ամենա-
աշխարհաբարյան քերթվածներից (գրվ. 1872—73 թթ.).

Ինչպէս շող մի ցօղաթում վարդ
Թրթռաց ժրպիտ այտիդ վրա՞ն.
Աչքերուդ կապոյտ վրին մէջ
Հոյլ ի հոյլ անուրջ պանան...
(«Առ քեզ») ²⁵

Նույն շրջանի չափածոյում սովորաբար թվարկվում են նաև գործեր, ո-
րոնք իրենց լեզվական հատկանիշներով համեմատաբար մերձ են ժամանակի
գրական աշխարհաբարին կամ շեն զիջում Դուրյանի բանաստեղծութեան լեզ-
վական ընդհանուր որակին, ինչպես՝ «Հաւուր գործադրութիւն ազգային սահ-
մանադրութեան» (Ստ. Փափազյան), «Հայրենիք» (Ս. Ֆելիկյան), «Մանուկ
և արտուտիկ», «Փառատենչ անուրջ», «Կիլիկիա» (Ն. Ռուսինյան), «Ո՛ւր, քաղ-
ցըր երկիրս», «Արի շուշան...» (Արմ. Հայկունի) և այլն²⁶: Բայց մի բան,
այնուամենայնիվ, անվիճելի է, որանք բոլորն էլ (և՛ առաջինները, և՛ երկ-
րորդները) ունեն մի էական պակաս. ոչ միայն շեն հասնում լեզվական ա-
վարտուն և ամբողջական արտահայտութեան, այլև շունեն Դուրյանի չափա-
ծոյի լեզվին հատուկ քարձր բանաստեղծականութիւնը:

Վ. Ալիշանի ջանքը՝ իրար համադրելու միջբարբառային խոսակցական
հայերենի ու գրաբարի լեզվատարրերը, գեղագիտական հաջողութիւն չունե-
ցավ, թեև նրա քերթվածները այսօր դուրսով կամոք շեն ընթերցվում ոչ մի-
այն իրենց լեզվական «մեղքի» պատճառով: Մ. Պեշիկթաշլյանը այդ գործը
շարունակեց մասամբ. հրաժարվեց որոշ գրաբար տարրերից, սահմանափա-
կեց նաև խոսակցական աշխարհաբարի տարրերը. գնաց դեպի ներդաշնակու-
թիւն՝ հիմնականում ժամանակի գրական արևմտահայերենի շրջանակներում,
բայց մնաց փորձի սահմաններում՝ մասամբ միայն հաղորդ դառնալով ժա-
մանակի խոսակցական լեզվի պարզ անմիջականութեանը, ժողովրդի կողմից
գործառնող լեզվի մշակված որակին: Դուրյանը հիմնականում հրաժարվեց
գրաբարաբանութիւններից և ջանալով պահպանել նոր գրական լեզվի ոգին

²⁴ Մ. Անէմեան, Ժպիտք և արտասուք, Կ. Պօլիս, 1871, էջ 51:

²⁵ Թ. Թերզյան, Բանաստեղծութեանց ամբողջական հաւաքածոյ, հ. 1, Վենետիկ, 1929,
էջ 209:

²⁶ Տե՛ս «Հայ նոր գրականութեան պատմութիւն», հ. 2, Եր., 1962, էջ 415—420, «Քնար
Հայկական», Ս. Պետերբուրգ, 1868, էջ 214—223, 234 և այլն:

ու կանոնը՝ իր ժամանակի համար զգալի շահով մոտեցավ նաև օրերի գրավոր խոսակցական լեզվին:

Այստեղ հակասություններ չպետք է փնտրել: Դուրյանի բանաստեղծության լեզվական այդ հատկանիշը (ժամանակի գրական արևմտահայերենն է, միաժամանակ մոտ է գրավոր խոսակցական լեզվին) պայմանավորված է գրական արևմտահայերենի բնույթով ու զարգացման յուրահատկություններով: Ի սկզբանե սովելի մերձ լինելով իր ժողովրդային հիմքին, զարգանալով դրա հետ բնական ու օրինաչափ հարաբերություններում՝ գրական արևմտահայերենը գեղարվեստական շահածոյում (մասամբ նաև արձակում) շնորհունեց բացարձակ երկատված դրսևորումներ (ինչպես եղավ արևելահայ հատվածում՝ 1. ձևավորվող գրական լեզվին շատ մոտ, դրա որակին համապատասխան լեզվով գեղարվեստական գրականություն՝ Մ. Նալբանդյան, Ս. Շահազիզ և ուրիշներ, 2. խոսակցական լեզվի՝ առանց էական գրական մշակման ենթարկված գրային («ժողովրդական-գրական», — Գ. Զահուկյան) տարբերակը՝ Սայաս-Նովա, Խ. Աբովյան, Պ. Պոռչյան և ուրիշներ)²⁷: Թեպետ արևմտահայ և՛ շահածոյի, և՛ արձակի մեջ առանձնանում են հեղինակներ, որոնց գործի առանձին հատվածներում կամ ամբողջի մեջ մեծ տեղ է տրվում արևմտահայ գրական աշխարհաբարի բարբառային հիմքին մոտեցող ժողովրդախոսակցական լեզվի տարրերին՝ անկախ ոճավորումից՝ Մ. Աճեմյան, Գ. Սրվանձտյանց, Մ. Հովհաննիսյան, Թյկատինցի, Ա. Հարությունյան (Կարո), Ռ. Զարդարյան, Գեղամ Տեր-Կարապետյան և ուրիշներ:

Գրական և խոսակցական տարբերակների մերձեցման հիմքի վրա 60—70-ականներից սկսվում է արևմտահայ շահածոյի և արձակի լեզվական ընդգծված տարբերությունների սահմանափակում:

70-ականներին արձակը դիտվում էր գեղարվեստական խոսքի դրսևորման ավելի բնական վիճակ: Այդ հատկանիշը աստիճանաբար, բայց անշուշտ որոշակի շրջանակներում, սկսում է փոխանցվել շահածոյին: Իր հերթին մեծանում է վերջինիս ներգործությունը արձակի լեզվի վրա՝ այն առավել հակիրճ, սեղմ դարձնելու առումով: Նույն տասնամյակներից արևմտահայ նորավեպի կամ առհասարակ փոքր արձակի լեզվաոճական աննախադեպ զարգացումը հիմքեր ուներ նաև այս փոխադարձ ազդեցությունների միջ: Պ. Դուրյանի շահածոն այդ շրջանի լեզվական արտահայտությունն է և իբրև այդպիսին՝ որոշ իմաստով ունի շրջադարձային նշանակություն: Իր քերթվածների լավագույն մասով Դուրյանը հանդես եկավ որպես արևմտահայ բանաստեղծության լեզվի ձևավորման շրջափուլն ընդհանրացնող և նոր ճանապարհ բացող հեղինակ: Նրանից հետո այլևս անշրջելի դարձավ այն գաղափարը, որ կազմավորման որոշակի շրջան անցած գրական արևմտահայերենը ի զորու է դառնալու նոր և բարձրարվեստ բանաստեղծության լեզու: «Ով որ կարդայ 1870-ի աշխարհաբարը Դուրեանին գրիչին տակ, — գրում է Հ. Օշականը, — յստակ զգայնութիւնը կ'առնէ թէ կը գտնուի լեզուի մը դիմաց որ կը բաւէ խորագոյն ապրումներն իսկ առարկայելու ամենէն մեծ բանաստեղծակուն զգայնութեան: Կը նշանակէ թէ գտնուած է գրականութեան մը գործիք»²⁸:

²⁷ Տե՛ս Ռ. Իշխանյան, Արևելահայ բանաստեղծության լեզվի պատմություն, Եր., 1978, էջ 258—259, Լ. Եզեկյան, Նշվ. աշխ., էջ 315—316, Ս. Մելիքյան, Հովհ. Քումանյանը և արևելահայ գեղարվեստական գրականության լեզուն, Եր., 1986, էջ 59—87, Եսայի Ակնարկների հայոց լեզվի ոճաբանության, Եր., 1984, էջ 255 և այլն:

²⁸ Հ. Օշական, Համապատկեր արևմտահայ գրականութեան, հ. 3, Երուսաղեմ, 1947, էջ 120:

Դուրյանի շափածոյում առկա բարբառայնութիւնները [չը կրցին (19), ինիմ (14), քոչտելով (27), մարդիկն (86), հեռի (34), կանուխկեկ (42), առ-յունըվա (16)], գրաբանութիւնները [անդեն (11), յաւ (19), գրգլպակ (= պատահողած հանդերձ (26), տխրական (= տխուր (34), սրանա (= սր-րաթոհիջ), համբուն (= ամենեկին (36), խրախ (= խրախճանք (22) և այլն], ինչպես նաև բառապաշարային, հնչլուծական և փերականական երկնութիւն-ները [արտսուր (13)= արտասուր (37)= արտսուր (68)= արցունք (27), աս-տեղաց (23)= աստղերու (36), փթիթ (48)= փերթիթներ (62), տերէներ (23) = տերէք (62), ընկնող (15)= ինկած (42), վարդեր (63)= վարդքն (69), բուլլ (52)= բուլլեր (65), նորա (79)= անոր (90) և այլն]²⁹, որոնցով առանձնանում են հեղինակի հատկապես փիչ հաջողված բանաստեղծութիւնները, հատկա-նիշներն են մշակման ընթացքի մեջ գտնվող գրական լեզվի: Այդ շափածոյի լեզվի մասին Աճառչանի վերապահ դիտարկումը, թե «նույն իսկ Դուրյանը, որ այն ժամանակի աշխարհաբարբառայն բանաստեղծն էր, իր ամենից ավելի քնարական տաղերի մեջ անգամ հաճախ գործ է ածում շատ գրաբարբառն. մի լեզու»³⁰, միայն այս տեսակետից է ընկալելի:

Նշված հատկանիշները բացառելու համար գրական արևմտահայերենը դեռ ճանապարհ ունեն անցնելու:

Դուրյանի գործի ամենախոր ուսումնասիրողներից մեկը՝ Ս. Հակոբյանը, գրում է. Դուրյանը կանխավ զգաց, որ «նոր ժամանակի բանաստեղծութիւնը արժէք եւ իմաստ կ'ունենայ միայն նոր լեզուի շրջանակի մէջ: Այս գիտակ-ցութիւնը նրա արուեստի հիմնական տարրերից է: Սակայն այն լեզուն, որով նա սկսեց գրել 60—70-ական թուականներին զարգացած եւ մշակուած լեզու էր: Բանաստեղծական գործի ամբողջ արժանիքն այնտեղ էր, որ նա ձեռք առաւ այդ նոր, կենդանի, բայց անմշակ լեզուն»³¹: Արդարացի լինելու հա-մար պիտի ասել, որ այդ գիտակցութիւնը նոր չէր արևմտահայ շափածոյում: Թեև ոչ նույն հետևողականութիւնով, սակայն նույն գիտակցութիւնը տրամա-բանութիւնով էր գործում նաև Դուրյանի հեղինակավոր նախորդը: Դուրյանը եղավ այդ գործի մեծ շարունակողը:

Պ. Դուրյանի մեծութիւնը նաև խն է, որ ձեռք առնելով դեռևս վերջ-նական մշակման շնասած գրական արևմտահայերենը՝ գեղարվեստական շա-փածոյում այդ լեզվի համար նա ապահովեց հնարավոր առավելագույն գոր-ծառույթ:

Ю. С. АВЕТИСЯН—Из истории языка западноармянской поэзии.
Петрос Дурян.—Петрос Дурян (1852—1872) одна из видных фигур ар-мянской литературы, в лучшей части своих стихов выступил как автор, формирующий и обобщающий достижения языка западноармянской поэзии и проторивший новые пути ее развития. После него стала уже необратимой идея о том, что прошедший этап формирования литера-турный западноармянский способен стать языком новой и искусной поэзии. В художественной поэзии Дурян обеспечил широкие функции для этого языка, приходит к заключению автор статьи, рассматривая поэтическую продукцию великого поэта в русле истории языка за-падноармянской поэзии.

²⁹ Այդ երկնութիւնները երբեմն հանդիպում են միևնույն տաղի մեջ, ինչպես՝ տրապա-վաց—արտասուրներու (15), կապուա—կապույտ (13—14), աստղեր—աստղիք (44—45), աչ-փեր—աչքն (64—65), նոնիք—նոնիներ (83—84), ինծի կ'ըսեն—ինձ կ'ըսեն (88) և այլն:

³⁰ Չր. Աճառչան, Հայոց լեզվի պատմութիւն, 2-րդ մաս, Եր., 1951, էջ 597:

³¹ Ս. Հակոբյան, Նշվ. աշխ., էջ 172: